

ՊՈԱԿ – ի կոլեգիալ կառավարման խորհրդի

նախագահ



ԿԱՐԳ

ԱՐԹԻԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ

Սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ընթացիկ ստուգման և գնահատման

Ստուգման և գնահատման կարգը

Գնահատումն ուսումնական գործընթացի որակի և ուսուցման արդյունքների բացահայտումն միջոց է :

Միջին մասնագիտական կրթության բովանդակությանը ներկայցվող պահանջների , ուսումնական գործընթացի կազմակերպման , կրթության որակի բարելավման և վերահսկման մոտեցումների և մմեթոդների հիման վրա սովորողների ընթացիկ գնահատման համակարգը նպատակ ունի լուծելու հետևյալ խնդիրները.

1/ բացահայտել սովորողի ուսումնական գործունեության և առաջադիմության ընթացքը, արձանագրել և վերլուծել նրա ուսումնական ձեռքբերումներն ու դժվարությունները.

2/արունակաբար և ըստ փուլերի ստուգել և գնահատել սովորողի կողմից պետական չափորոշիչով ամրագրված բովանդակային բաղադրիչների յուրացման և տիրապետման աստիճանը,

3/գնահատման տարբեր ձևերի և տեսակների համակարգված կիրառման միջոցով հնարավորություն տալ սովորողին առավելագույնս ցուցաբերել իր գիտելիքների, կարողությունները և հմտությունները,

4/գնահատման չափանիշների հստակեցմամբ բարձրացնել ուսուցման գործընթացի արդյունավետությունը,

5/ուսուցանող գնահատման կանոնակարգմամբ խթանել սովորողի հետաքրքրությունը դասավանդվող ուսումնական առարկայի նկատմամբ և բարձրացնել ուսումնառության արդյունավետությունը,

6/նպաստել սովորողի անձնային որակների ձևավորմանն ու վարքագծի կարգավորմանը, խթանել սովորողի ինքնաճանաչման , ինքնազարգացման և ինքնագնահատման կարողությունների զարգացումը,

7/բարձրացնել դասախոսի պատասխանատվության և մասնագիտական պատրաստվածության աստիճանը,

8/ ճշգրտել յուրաքանչյուր սովորողի հետ տարվող անհատական աշխատանքի բովանդակությունն ու ծավալը, խթանել նրա ուսումնական ակտիվությունը,

9/հայտորոշել ուսուցման ընթացքն ու արդյունքները,

10/ շահկապել ուսուցումն ուսումնառության հետ,

11/ապահովել փոխադարձ կապ սովորողի , նրա ծնողի հետ,

12/հաշվառել մեկնարկային վիճակի նկատմամբ սովորողի առաջադիմության ընթացքը,

13/վերահսկել ուսումնական գործընթացն ու արդյունքները:

Գնահատումը սովորողի ուսումնական գործունեության արդյունքում ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների վերաբերյալ համակարգված տեղեկատվության հավաքագրման գործընթացն է :

Ընթացիկ գնահատումը միտված է կրթության որակի արմատական բարելավմանը և յուրաքանչյուր սովորողի ուսումնական գործունեության խթանմանը, ակտիվացմանը, շարունակաբար զարգացմանը, կրթության որակի վերահսկմանը :

Սովորողի ուսումնառության ընթացիկ գնահատման ձևերն են միավորային գնահատումը և ուսուցանող գնահատումը .

1/Ուսուցանվող գնահատումը սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման հետ կապված թերըմբռնումների, սխալների և դժվարությունների բացահայտման և դրանց հաղթահարման, սովորողի մտածողության և ճանաչողության ոլորտն ընդլայնելու համակարգված գործընթացն է , ինչպես նաև միեռադարձ կապի կիրառմամբ ուսումնական գործընթացում տեղեկությունների հավաքագրման և արժևորման միջոցով կրթական չափորոշիչների, ուսումնական ծրագրերի և դասավանդման մեթոդների բարելավումը :

2/ Միավորային գնահատումն ուսումնառության ընթացքում սովորողի ձեռքբերումների մակարդակը թվանշանով արտահայտելն է՝ համաձայն պետական չափորոշիչի :

Ընթացիկ գնահատման համակարգի կիրառման հիմքում ընկած են հավաստիության, հուսալիության, հիմնավորվածության, մատչելիության, արդարության և թափանցիկության սկզբունքները :

Ընթացիկ գնահատման ձևերի և տեսակների ամբողջական կիրառման համար , որպես ժամանակային – հաշվառկային միավոր է սահմանվում ուսումնական տարվա մեկ կիսամյակը :

Միավորային գնահատման արդյունքները գրանցվում են 1-ից մինչև 10 ամբողջ թվերով արտահայտվող միավորային սանդղակով : Ընթացիկ գնահատումն իրականացվում է բանավոր, գրավոր, և գործնական եղանակներով :

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցող սովորողի գնահատումն իրականացնել հիմնականում ուսուցանող գնահատմամբ : Կախված անհրաժեշտությունից և հատուկ կարիքի տեսակից՝ կիրառել նաև միավորային գնահատում:

Սովորողի պատրաստվածության մակարդակն ու նրա անձնային- անհատական որակները որոշելու համար գնահատվում են՝

1. չափորաշիջներով սահմանված գիտելիքների յուրացումը,
2. սովորածը գործնականում կիրառելու կարողություններն ու հմտությունները,
3. մտավոր գործունեության մակարդակը

ՍՈՎՈՐՈՂԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ 10 ՄԻԱՎՈՐԱՅԻՆ ՍԱՆԴՂԱԿԻ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ

բանավոր, գրավոր և գործնական աշխատանքների ստուգումից ստացված արդյունքների գնահատում

1 միավոր – չի ցուցաբերում ուսումնասիրված ծրագրային նյութի իմացություն:

2 միավոր – ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակության հետ չառնչվող տարրական գրագիտություն և պարզ առաջադրանք կատարելու պատրաստակամություն:

3 միավոր - ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակության չափորոշչային նվազագույն պահանջների անբավար իմացություն և պարզ առաջադրանք կատարելու պատրաստակամություն:

4 միավոր ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի չափորոշչային նվազագույն պահանջներին համապատասխան իմացություն, ծանոթ կամ պարզ իրադրությունում այն կիրառելու կարողություն, և այդ նյութի վերաբերյալ պարզ առաջադրանք կատարելու պատրաստվածություն :

5 միավոր – ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի չափորոշչային նվազագույն պահանջներին համապատասխան իմացություն, ծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, ոչ բարդ հիմնավորում պահանջող առաջադրանք կատարելու պատրաստվածություն :

6 միավոր – ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի չափորոշչային նվազագույն պահանջներին համապատասխան լիարժեք իմացություն, ծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար հայտնի մեթոդների իմացություն, միջնորդավորված քայլ ենթադրող առաջադրանք կատարելու պատրաստվածություն :

7 միավոր – ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի իմացություն, ծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար միջնորդավորված քայլ կատարելու կարողություն, հիմնավորում պահանջող առաջադրանք կազարելու պատրաստվածություն :

8 միավոր - ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի հիմնավոր իմացություն, ծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար ինքնատիպ մոտեցում, միջնորդավորված քայլ, պարզ արտածում, հիմնավորում պահանջող առաջադրանք կատարելու պատրաստվածություն : Կարողանում է ճանաչել տեղեկատվության կազմությունն ու կառուցվածքը, տրոհել այն մասերի և տեսնել այդ մասերի միջև եղած կապերը :

9 միավոր - ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի հիմնավոր իմացություն, անծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար ինքնատիպ մոտեցում, հատուկ մեթոդներ, միջնորդավորված քայլ, արտածում, հիմնավորում պահանջող առաջադրանք կատարելու պատրաստվածություն : Անհրաժեշտ նյութը ձեռք բերելու համար կարողանում է օգտվել տարբեր աղբյուրներից, հավաքել , համադրել ու վերլուծել ձեռք բերած տեղեկատվությունը :

10 միավոր - ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի հիմնավոր իմացություն, անծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն պահանջող, կողմնորոշման և կատարման համար բազմակողմանի վերլուծություն, ստեղծագործական մոտեցում, հատուկ մեթոդներ, արտածում, հիմնավորում, կռահում ենթադրող առաջադրանք կատարելու պատրաստվածություն : Կարողանում է անհրաժեշտ նյութը ձեռք բերելու համար կարողանում է օգտվել տարբեր աղբյուրներից, հավաքել , համադրել, անփոփել ձեռք բերած գիտելիքն ու տեղեկատվությունը :

Գնահատման սանդղակը և բնութագրիչները

Միավոր /Գնահատական/	Գնահատման բնութագրիչները
9-10 /գերազանց/	Գիտելիքների և կարողությունների լիարժեք արդյունք
7-8 /լավ/	Գիտելիքների և կարողությունների բարձր արդյունք մասնակի թերացումներով
4-5-6 /բավարար/	Գիտելիքների և կարողությունների ընդունելի մակարդակ՝ զգալի թերացումներով
1-2-3 /անբավարար/	Գիտելիքների և կարողությունների դրսևորման անընդունելի մակարդակ
4-10 /ստուգված/	Գիտելիքների և կարողությունների դրսևորման ընդունելի մակարդակ
1-3 /չստուգված/	Գիտելիքների և կարողությունների դրսևորման անընդունելի մակարդակ

Վերջնարդյունքների գնահատման համակարգը

Ուսանողի կողմից ծրագրի ընդհանուր կրթական արդյունքներին համապատասխան կարողությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի իրականացմամբ կամ ծրագրի ավարտից հետո կազմակերպվող ավարտական/պետական/ քննությամբ, որը չի կրկնում կիսամյակային քննություններով հաստատված կրթական արդյունքների գնահատումները :

Ուսանողների վերջնարդյունքների գնահատման համակարգը պետք է ունենա գնահատման և նշանագրման հստակ և հրապարակված չափանիշներ :

Օգտագործվող գնահատման սանդղակը պետք է հնարավորություն ատ առանց դժվարության հաշվարկելու կիսամյակի և ուսումնառության ողջ շրջանի ընթացքում ուսանողի վաստակած վարկանիշային միավորները՝ միևնույն ծրագրում ընդգրկված տարբեր ուսումնական բեռնվածություն ունեցող ուսանողների առաջադիմությունները համեմատելու համար : Օգտագործվել գնահատման սանդղակը պետք է հնարավորություն տա հաշվարկելու ուսանողի միջին որակական գնահատականը կիսամյակի և ուսումնառության ցանկացած ժամանակահատվածի համար՝ ուսանողի բացարձակ առաջադիմության չափման համար : Գնահատումները կարող են կատարվել ինչպես թվային կամ տառային նշագրումով տարբերակված գնահատականներով, այնպես էլ «ստուգված» և կամ «չստուգված» սկզբունքով :

Գնահատման եղանակից և գնահատականների նշանագրման ձևից /ստուգարք կամ տարբերակված գնահատում/ անկախ բոլոր տեսակի գնահատումներն իրականացվում են ուսումնական պարապմունքների ավարտից հետո՝ առանձին քննաշրջաններում կազմակերպվող քննությունների օգնությամբ :

Գիտելիքների գնահատումը /ստուգումը/ ներառում է հետևյալ բաղադրիչները.

1/ դասընթացին ուսանողի մասնակցության գնահատում՝ դասահաճախումների հաշվառման օգնությամբ,

2/ դասընթացի /ուսումնական մոդուլի/ ենթաբաժինների և ծրագրով նատեսված անհատական առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում / ընթացիկ քննություններ և ստուգումներ/,

3/ամբողջ դասընթացի կամ ուսումնական մոդուլի եզրափակիչ գնահատում քննաշրջանում, ինչը ենթադրում է դասընթացի կամ կրթական մոդուլի համար սահմանված կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակի գնահատում,

4/ ստուգման արդյունքների ինտեգրում՝ դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանի, ընթացիկ և եզրափակիչ գնահատումների հիման վրա դասընթացի /ուսումնական մոդուլի/ արդյունարար գնահատականի ձևավորում:

Ելնելով մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների /ուսումնական մոդուլների/ աշխատածավալից, պարապմունքի ձևից, միասավանդման մեթոդներից և հաշվի առնելով դասընթացի կարևորությունը ուսանողի մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձևավորման մեջ դասընթացներն ըստ գնահատման ձևի բաժանվում են 2 խմբի՝

1/եզրափակիչ գնահատումով դասընթացներ,

2/ առանց եզրափակիչ գնահատման դասընթացներ:

Ընթացիկ և եզրափակիչ քննությունների /ստուգումների ենթակա ուսումնական նյութի բովանդակությունը, քննությունների ձևերը, հարցաշարերը և ժամանակացույցը, ինչպես նաև գնահատման մեթոդներն ու չափանիշները տրամադրվում են ուսանողներին նախապես /կիսամյակի առաջին 2 շաբաթվա ընթացքում/:

Ընթացիկ և եզրափակիչ քննությունների ժամանակացույցները կազմում են ամբիոնները և ուսումնական աշխատանքների գծով պատասխանատուի ներկայացմամբ հաստատվում են նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության ղեկավարի կողմից :

Արդյունավետ գնահատման երեք սկզբունքներն են՝

- 1.Հուսալիությունը
- 2.Արժանահավատությունը
- 3.Անաչառությունն ու արդարացիությունը

Հուսալի գնահատում

Հուսալի գնահատումը ենթադրում է ուսանողներին այնպիսի առաջադրանքների ներկայացում, որոնք համաձայնեցված են մասնագիտական ուսումնական ծրագրի կրթական վերջնարդյունքներին և չափում են ուսանողների՝ այդ վերջնարդյունքներին հասնելու աստիճանը:

Արժանահավատ գնահատում

- Արժանահավատ գնահատումը ենթադրում է թվանշան հետևողականության տրամաբանվածության առկայություն
- Երբ թվանշունը տրամաբանված է և հիմնավորված է մի քանի դասխոսների գնահատման արդյունքում կամ մեկ դասախոս հետևողական է գնահատման պջոցեսի ողջ ընթացքում, դա վկայում է , որ գնահատման արդյունքներն արժանահավատ են :

Անաչառ գնահատում

Գնահատման արդարացիությունը ենթադրում է, որ առաջադրանքի կատարման ընթացքում ուսանողներին տրվել են հավասար հնարավորություններ դրսևորելու իրենց ուսումնառության արդյունքները : Անաչառ գնահատումը պահանջում է, որ ուսանողները ակամա չհայտնվեն իրենց առաջադիմությունը ցուցաբերելու ռավելի լավ կամ վատ պայմաններում : Գնահատման արդարացիությունը ենթադրում է, որ առաջադրանքի կատարման ընթացքում ուսանողներին տրվել են հավասար հնարավորություններ դրսևորելու իրենց ուսումնառության արդյունքները : Անաչառ գնահատումը պահանջում է , որ ուսանողը ակամա չհայտնվեն իրենց առաջադիմությունը ցուցաբերելու ավելի լավ կամ վատ պայմաններում :

Գնահատման թափանցիկություն

Գնահատման չափանիշների և ստանդարտների հստակ և հասկանալի սահմանումը, այլ կերպ ասած՝ գնահատման պրոցեսի թափանցիկությունը պարտադիր պահանջ է :

Գնահատման առավել տարածված գործիքները.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔԸ	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
Ինքնագնահատում	Հարցաշար , որն օգնում է սովորողին պատասխանել հետևյալ հարցերին՝ ի՞նչ գիտեմ, ի՞նչ կարող եմ անել/կատարել, նախկինում կատարած աշխատանքի արդյունքների ի՞նչ վկայություններ կարող եմ ներկայացնել : Բոլոր այս հարցերը վերաբերում են տվյալ զբաղմունքի կողմերին և առանձնահատկություններին՝ ինչպես դրանք բերված են զբաղմունքի նկարագրում : Գնահատման այս գործիքը մշակողները որոշում են , թե ինչ մանրամասնությամբ ուսանողը պետք է պատասխանի այս հարցերին :
Հանձնառություն	Հանձնառությունը որևէ խնդիր լուծելու առաջադրանք է հստակ ուղեցույցներով, կառուցվածքով և տևողությամբ : Մեթոդաբանության ու բովանդակության տեսանկյունից ուսանողներին բավական սահմանափակ ընտրության հնարավորություն է տրվում :
Լրացման հարցեր	Ուսանողից պահանջվում է լրացնել առաջադրված պնդման մեջ բաց թողնված բառերը / մասերը/ :
Ընկալում	Առաջադրված տեքստին վերաբերող հարցեր, որոնց տրված պատասխանները գնահատվում են ուսանողի բառերի, արտահայտությունների, մասնագիտական տերմինաբանության ընկալումը :
Փակ հարցեր	Ժահանջվում է տրված հարցերի պատասխանների տարբերակներից ընտրել ճիշտը: Պատասխանների որոշ տարբերակներ կարող են հիմնավոր թվալ , բայց ճիշտ չլինել :
Հարցերի և պատասխանների համապատասխանություն	Պահանջվում է գտնել համապատասխանություն տրված հարցերի և պատասխանների շարքերում :
Բանավոր կամ /անհատական/հարցազրույց	Սա կառուցակարգված զրույց է /սովորաբար՝ դեմ առ դեմ/, անմիջականորեն ուսանողից տեղեկություններ ստանալու նպատակով: Այս գործիքը հատկապես կիրառելի է , երբ անհրաժեշտ են գործընթացների իմացության կամ փորձառական ուսումնառության

	վկայություններ : Պատասխանները կարող են արձանագրվել հարցաթերթի տեսքով :
Բանավոր ներկայացում	Ուսանողից պահանջվում է ներկայացնել նախապես պատրաստված խոսք՝ հղման, զեկուցման կամ կարծիքի արտահայտման տեսքով ; Բանավոր ներկայացումը կարող է օգտագործվել որպես գրավոր պատասխանի այլընտրանք կամ որպես ինքնուրույն մեթոդ, /եթե, օրինակ՝ անհրաժեշտ է գնահատել ուսանողի բուն բանավոր խոսքը :
Կատարում	Ուսանողից պահանջվում է որոշակի պայմաններում ցուցադրել որևէ աշխատանքային խնդրի կատարում՝ դրսևորվելով մասնագիտական հմտություններ, տեխնիկա, գիտելիք և ընկալում :
Գործնական վարժություն	Ուսանողից պահանջվում է ցուցադրել մի շարք գործնական հմտություններ: Գնահատումը կարող է իրականացվել գործողությունների արդյունքի, դրանց ընթացքի կամ այդ երկուսի համադրության հիման վրա :
Նախագիծ	Նախագիծը պահանջում է զգալի ծավալի աշխատանք, որի շրջանակներում ուսանող-ները պետք է կատարեն հետազոտություններ և պլանավորում, խնդիրներ լուծեն ու գնահատում անցկացնեն՝ որոշակի ժամանակի ընթացքում: Որոշ նախագծեր գործնական բաղադրիչներ են ներառում : Նախագծերն ավելի ընդգրկուն և ստեղծագործական են, քան հանձնառությունները, և կարող են իրականացվել ինչպես անհատապես, այն-պես էլ խմբով : Թեև նախագծերը կարող են կատարվել առանց անմիջական հսկողությամբ, սակայն գնահատման օբյեկտիվության շահերից է բխում, որ հսկողության որոշակի մակարդակ, այնուամենայնիվ, պահպանվի : Սովորաբար, նախագծի պսակը զեկույցն է, արտադրանքը կամ դրանց համադրումը :
Հարցաթերթ	Հարցաթերթի միջոցով ըստ էության իրականացվում է կառուցակարգված գրավոր հարցազրույց, որը վերաբերում է կարողության որոշակի բնագավառի: Ի տարբերություն անհատական հարցազրույցի՝ սա իրականացվում և քննվում է ստանդարտ պայմաններում :
Հակիրճ պատասխան պահանջող հարցեր	Այս տիպի հարցերը պահանջում են նախապես սահմանված մի քանի բառից բաղկացած պատասխաններ և կարող են պարունակել նաև թվեր, գծապատկերներ, գրաֆիկներ, դիագրամներ և այլն : Թեև այս հարցերը նախատեսված են հիմնականում մնացորդային գիտելիքները ստուգելու համար, սակայն կարող են օգտագործվել նաև գիտելիքի, օրինակ՝ մաթեմատիկական հասկացությունների կիրառման ունակու-թյունը գնահատելու համար :
Կառուցակարգված հարցեր	Կառուցակարգված հարցերի առանցքը որևէ իրավիճակի նկարագրությունն է, որին հաջորդում են դրան վերաբերող մի շարք կարգեր

	: Այդ նկարագրությունը կարող է պարունակել տեքստ, գծապատկեր, նկար, տեսագրություն և այլն :
Այլընտրանքային պատասխանով հարցեր	Այս տիպի հարցերի պարագայում թեկնածու-ից պահանջվում է պատասխանել, արդյոք բերված պնդումը ճի՞ծո՞ւ է, թե սխալ: Սովորաբար օգտագործվում են տեղեկություններ մտաբերելու կամ տարանջատելու ունակությունները գնահատելու համար :

Անհատական հարցումների և առաջադրանքների բարդությունը կարող է պայմանավորված լինել ստորև բերված առանձնահատկություններով կամ դրանց համալիր ազդեցությամբ : Այդ իսկ պատճառով ուսանողի համար պետք է ապահովվեն նրա նվաճումները ցուցադրվելու բոլոր հնարավորությունները :

Պահանջվող մտածողության տեսակը

Հարցերն /առաջադրանքներն ավելի բարդ են դառնում, երբ անցում է կատարվում գիտելիքների մտաբերումից դեպի ընկալման, մեկնաբանություններ ու գնահատում կատարելու, տեղություններ, գաղափարներ և հասկացություններ վերլուծելու ունայության վկայությունները :

Լեզվի կամ խնդրո առարկայի վերացարկման աստիճանը

Հարցի /առաջադրանքների բարդությունը կախված կլինի նրանից , թե որքան վերացական կամ կոնկրետ են լեզուն և խնդրո առարկան :

Մասնագիտական տերմինաբանությունը

Մասնագիտական տերմինաբանությունը

Մասնագիտական տերմինաբանությունը պետք է կիրառվի միայն այնքանով, որքանով այն ընդհանուր առմամբ կարող է ծանոթ լինել տվյալ մակարդակի ուսանողին և անհրաժեշտ էթեմայի ընկալման համար : Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառություն ստացած ուսանողների գնահատման պարագայում նեղ մասնագիտական տերմինաբանության օգտագործումը պետք է հնարավորինս սահմանափակվի :

Հարցի /առաջադրանքի առարկան

Հարցի առաջադրանքի առարկան պետք է հնարավորինս նեղ ընտրվի խնդրի արհեստական բարդություններ չստեղծելու համար :

Հարցի / առաջադրանքի լեզվի մատչելիությունը

Հարցի /առաջադրանքի ձևակերպումներն ու նհամապատասխան ցուցումները պետք է լինեն հնարավորինս պարզ , հստակ ու մատչելի բոլոր մակարդակներում : Պետք է խուսափել հեղինղուկ կամ ժարգոնային լեզվից :

Ձևակերպումների հստակությունն ու համաձայնեցվածությունը

Ուսանողները հնարավորինս արագ պետք է կողմորոշվեն՝ արդյոք նրանք կարող են պատասխանել հարցին կամ կատարել առաջադրանքը, և որքան ժամանակ՝ անհրաժեշտ դրա համար :

Հարցերի ձևակերպումներն ու գործնական առաջադրանքների ցուցումները չպետք է ուսանողների համար արհեստական խոչընդոտներ առաջացնեն հասկանալու, թե ինչ է նրանցից պահանջվում :

Գնահատողի զբաղմունքի նկարագիր

Կարողությունը	Կատարման չափանիշը
Թեկնածուի գնահատման պլանավորում	Համոզվել, որ ապահովված են ուսանողի գնահատման համար անհրաժեշտ բոլոր պայմանները :Ուսանողի հետ քննարկել գնահատման բոլոր պայմաններն ու պահանջները: Ուսանողին պարզաբանել գնահատմանը վերաբերող բոլոր հարցերը : Ստուգել գնահատման գործընթացի ուսանողի ընկալումը :
Գնահատման իրականացում	Ապահովել ուսանողի համար բոլոր անհրաժեշտ ռեսուրսների մատչելիությունը: Գնահատման բոլոր մասնակիցների համար ապահովել անվտանգ միջավայր :Կիրառել գնահատման տարբեր մեթոդներ ըստ գնահատման գործիքների :Համոզվել,որ ապացույցները /վկայությունները/ վավերական են, ճշգրիտ և բավարար : Աշխատել գնահատման գործընթացում ընդգրկված այլ անձանց հետ :
Ուսանողի հետ հետադարձ կապի ապահովում և աջակցության տրամադրում	Հետևյալ գնահատման ընթացքում ուսանողի կատարողակա-նին: Ուսանողին տրամադրել պատշաճ և կառուցողական արձագանք գնահատման յուրաքանչյուր առաջադրանքից հետո : Հստակ բացատրել գնահատման արդյունքում կայացրած որոշումը : Ուսանողին բավարար չգնահատելու դեպքում տրամադրել համապատասխան երաշխավորություններ նրա հետագա կատարելագործման վերաբերյալ :
Ուսանողի նվաճումների մասին որոշման կայացում	Ձևնել ապացույցները ուսումնառության արդյունքների կատարման չափանիշներին համապատասխանության տեսանկյունից : Գնահատման արդյունքները հանձնատել վկայագրման/հավաստագրման/ պայմանների հետ և ներկայացնել վկայագրման/հավաստագրման/ առաջարկություն : Որոշարկել կարողությունների բացերը և առաջարկել հետագա կատարելագործում ֆորմալ և կամ և կամ որ ֆորմալ ուսումնառության միջոցով :
Գնահատման արդյունքների արձանագրում	Համապատասխան կանոնակարգերով և ընթացակարգերով սահմանված ժամկետում կատարել բոլոր պահանջող գրառումները : Համոզվել , որ գրառումները կատարված են պատշաճ կերպով : Սահմանված կարգով տեղեկություններ տրամադրել համապատասխան անձանց /կառույցներին / :